Արձանագրություն 3

«ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 02.08.2018թ.
ժ.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ազատյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Բալյան /գնահատող/
Տ. Գալստյան /գնահատող/
Կ. Բաբայան /բացող/
Ա. Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին
(Ս. Ազատյան)

1.1 <<Տիր հրատարակչություն>> ՍՊԸ-ի կողմից 27.07.18թ-ին ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից 30.07.18թ-ին ներկայացվել է համապատասխան տեղեկատվությունը:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների մասին
(Ս. Ազատյան)

2.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ներկայացված տեղեկատվության աղյունքում արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունը՝ <<Տիր հրատարակչություն>> ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում ներկայացրած գնային առաջարկից:

2.2 <<Տիր հրատարակչություն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

- Հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը՝ ներառյալ Դիմում Հավելված 5-ը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ.

- Երևանի պետական համալսարան հիմնադրամ Իջևանի մասնաճյուղի հետ 06,10,2017թ կնքված թիվ <<ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-17/75>> պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում հստակ նշված չէ գնման առարկան, որը հնարավորություն չի տալիս այն գնահատելու որպես նմանատիպ,
- Պայմանագրին կից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի պատճեններում բացակայում են պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը, որը հնարավորություն չի տալիս այն դիտարկել որպես տվյալ պայմանագրի հիմնավորող փաստաթուղթ,
- Պայմանագրին կից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունների հանրագումարը /224750 ՀՀ դրամ/ չի համապատասխանում պայմանագրով սահմանված Ծառայության մատուցման ընդհանուր գումարին /300000 ՀՀ դրամ/, որը հնարավորություն չի տալիս այն գնահատելու որպես պատշաճ կատարված:

- Երևանի պետական համալսարան հիմնադրամ Իջևանի մասնաճյուղի հետ 05,02,2018թ կնքված թիվ <<ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-18/36>> պայմանագրով Ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել ս.թ. դեկտեմբերի 28-ը: Կից ներկայացված 12,02,18թ, 09,04,18թ, և 12,06,18թ հանձնման-ընդունման արձանագրությունների հանրագումարը /480000 ՀՀ դրամ/ չի համապատասխանում պայմանագրով սահմանված Ծառայության մատուցման ընդհանուր գումարին /500000 ՀՀ դրամ/, որը որը հնարավորություն չի տալիս այն գնահատելու որպես պատշաճ կատարված:

- Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա հիմնադրամի հետ 27,11,2017թ կնքված թիվ <<ՀԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/04>>-1 պայմանագրի և վերը նշված երկու պայմանագրերի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչը հնարավորություն չի տալիս նախկինում կատարված պայմանագրերը գնահատել որպես նմանատիպ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը առաջարկել <<Տիր հրատարակչություն>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.4 Հանձնաժողովի հաջորդ նիստը կազմակերպել ս.թ. օգոստոսի 6-ին, ժամը 14:00-ին ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկի, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Ս. Ազատյան /նախագահ/

_____ Ա. Բալյան

_____ Ս. Գալստյան

_____ Կ. Բաբայան

_____ Ա. Գևորգյան

_____ Ա. Մարգարյան /քարտուղար/